

*Բարկեն Հարությունյան, Հայաստանի պատմության ատլաս, Ա մաս, Երևան, «Մակմիլան Արմենիա» հրատարակչություն, 2004, 104 էջ: Բ մաս, Երևան, «Մակմիլան Արմենիա» հրատարակչություն, 2008, 104 էջ: Գ մաս, Երևան, «Մանմար» հրատարակչություն, Երևան, 2012, 104 էջ:*

Հնագույն ավանդույթներ ունեցող հայոց մշակութային ժառանգության մեջ իր ուրույն տեղն ունեն աշխարհագրական բնույթի երկասիրությունները: Դա պատահական չէ, քանի որ Հայաստանը, լինելով քաղաքակիրթ հին աշխարհի անքակտելի մասը, մշտապես գտնվել է ինչպես հայ, այնպես և օտար հեղինակների ուշադրության կենտրոնում: Հիշենք թեկուզ անտիկ աշխարհի երևելի մտածողներ Ստրաբոնի, Պլինիոս Ավագի կամ Պտղոմեոսի աշխատությունները, որոնք մեծաքանակ և ինքնատիպ տեղեկություններ են պարունակում Հայաստանի մասին:

Անուրանալի են նաև հայ աշխարհագրական մտքի եզակի հուշարձան «Աշխարհացոյց»-ի դերն ու պատմական նշանակությունը վերջինիս հետագա զարգացման գործում, որի ցայտուն օրինակը XIII դարում ստեղծված նույնանուն մեկ այլ՝ Վարդան Արևելցու գրչին պատկանող երկն է:

Ցավոք, հայկական պետականության երկարատև կորուստը զգալիորեն կասեցրեց հայ աշխարհագրական մտքի բնականոն զարգացման ընթացքը, որը վերածնվեց միայն XVIII դարում՝ շնորհիվ Մխիթարյան հայրերի հայրենանվեր գործունեության: Ի հետևանս դրա, արդեն XIX դարում որպես հայագիտության կարևոր և ուրույն ճյուղ ձևավորվեց Հայաստանի պատմական աշխարհագրությունը, որի հիմնադիրները դարձան նշանավոր հայագետներ Ղ. Ինճիճյանն ու Ղ. Ալիշանը:

Խորհրդային ժամանակաշրջանում պատմական աշխարհագրությունը և դրան սերտորեն առնչվող պատմական քարտեզագրությունը, հիրավի, մեծ առաջընթաց ունեցան, որը հիմնականում պայմանավորված է ակադեմիկոս Սուրեն Երեմյանի գիտական գործունեությամբ: Նրա ջանքերի շնորհիվ ստեղծվեցին պատմական Հայաստանի նորագույն քարտեզները, փորձ արվեց կազմելու նաև դպրոցական ատլաս:

Ս. Երեմյանի սաներից էր մեծանուն պատմաբան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բարկեն Հարությունյանը (1941-2013), որը, շարունակելով իր ուսուցչի գործը, հայրենական պատմական քարտեզագրությունը հասցրեց նոր բարձունքների: Դեռևս աշակերտական տարիներից ցուցաբերելով անթաքույց հետաքրքրություն

պատմական աշխարհագրության և քարտեզագրության նկատմամբ՝ Բ. Հարությունյանն իր գիտական ամբողջ գործունեության ընթացքում մշտապես զբաղվել է հայոց պատմության քարտեզագրմամբ, ինչը պատմագիտական բազմաթիվ հիմնահարցերի խոր ուսումնասիրության արգասիքն էր: Պատմաբանի բազմամյա գործունեության յուրօրինակ հանրագումարը դարձավ նրա հեղինակած՝ երեք մասից բաղկացած «Հայաստանի պատմության ատլաս»-ը, որը նրա հզոր մտքի և նախանձելի աշխատասիրության զուգորդման հիանալի դրսևորում է:

Գրախոսվող հրատարակությունը հայոց բազմադարյան պատմության համընդգրկուն առաջին ատլասն է, որն ընթերցողին՝ խստապահանջ գիտնականին, սկսնակ ուսումնասիրողին, ուսանողին թե ուղղակի շարքային հայ քաղաքացուն, հնարավորություն կընձեռի ստանալու իրեն հետաքրքրող տարատեսակ և բազմաբնույթ հարցերի սպառիչ պատասխանները: Նման կոթողային աշխատանք կարող էր ստեղծել հիրավի հանրագիտարանային գիտելիքներ ունեցող այնպիսի ուսումնասիրող, ինչպիսին էր Բ. Հարությունյանը: Ատլասում զետեղված քարտեզների գիտական բարձր մակարդակին մեծապես նպաստել են ինչպես հեղինակի՝ հայոց պատմության հայկական և օտար սկզբնաղբյուրների գերազանց իմացությունը, այնպես և լայնածավալ գիտելիքները համաշխարհային պատմության ասպարեզում:

«Հայաստանի պատմության ատլաս»-ի Ա մասն ընդգրկում է վաղնջական ժամանակներից մինչև XVII դարի առաջին կեսն ընկած իրադարձությունները լուսաբանող 51 քարտեզ, որոնք ներկայացնում են հայոց հնագույն և միջին դարերի պատմության կարևորագույն դրվագները: Հեղինակի առանձնահատուկ ուշադրությանն են արժանացել հնագույն հայկական պետական կազմավորումները, Վանի (Ուրարտու), Երվանդունիների, Արտաշեսյանների և Արշակունիների թագավորությունները, դրանց առնչվող դարակազմիկ իրադարձությունները, ինչպես նաև Հայաստանում քրիստոնեության ընդունումն ու մաշտոցյան հանճարով ստեղծված հայոց այբուբենը, V-IX դարերում օտար տիրապետությունների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարը, Բագրատունյաց և Կիլիկիայի հայկական թագավորությունները: Առանձին քարտեզներով ներկայացված է նաև հին և միջնադարյան հայ մշակույթը: Հարկ է նշել, որ լինելով հայոց պատմության հնագույն և վաղ միջնադարի պատմության խորագիտակ մասնագետներից և լավագույն ուսումնասիրողներից, Բ. Հարությունյանն Ա մասի քարտեզները, որպես կանոն, ներկայացրել է նորովի մեկնաբանություններով՝ անշուշտ հաշվի առնելով նաև այլ հեղինակավոր գիտնականների ուսումնասիրությունները:

Ատլասի Բ մասը ներառում է XVII դարի երկրորդ կեսից մինչև 1918 թ. Մայիսյան հեղուկամարտերը հասնող ժամանակահատվածին վերաբերող 63 քարտեզ: Ի թիվս դրանց՝ առանձնանում են XVII-XVIII դդ. հայկական

ազատագրական շարժմանը, հատկապես 1722-1730 թթ. Սյունիքի և Արցախի հերոսամարտերին, ինչպես նաև մեծ հայրենասերներ Իսրայել Օրու և Հովսեփ Էմինի գործունեությանը նվիրված ուշագրավ քարտեզները: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև հայոց պատմության XIX դարի իրադարձությունները լուսաբանող քարտեզները, որոնց շնորհիվ ընթերցողը կարող է հստակ պատկերացումներ կազմել տվյալ ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունների մասին՝ ըստ այն աշխարհագրական միջավայրի, որտեղ դրանք տեղի են ունեցել: Հատուկ ուշադրության են արժանացել մասնավորապես XIX դարի ընթացքում Հայաստանի տարածքում Ռուսական և Օսմանյան կայսրությունների միջև մղված պատերազմները և դրանց աշխարհաքաղաքական հետևանքները:

Խիստ կարևոր է XIX դարի երկրորդ կեսից նոր վերելք ապրած հայկական ազգային-ազատագրական պայքարը և XX դարի առաջին քսանամյակի՝ հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցած իրադարձություններն արտացոլող քարտեզների շարքը (վերջինս զբաղեցնում է ատլասի Բ մասի կեսը): Մանրակրկիտ կերպով ներկայացված են հատկապես Առաջին աշխարհամարտը և Հայոց ցեղասպանությունը: Բ. Հարությունյանն անդրադարձել է նաև 1915 թ. արևմտահայերի կարևորագույն՝ Վանում, Մուսա լեռան վրա կազմակերպված ինքնապաշտպանական մարտերին: Մինչև 1918 թ. ամառը ծավալված իրադարձությունները լուսաբանող քարտեզների թվում առանձնանում են Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերը ներկայացնող մանրագին սխեմաները: Հրատարակության Բ մասը եզրափակում են հայոց գաղթավայրերին (XVIII դարի երկրորդ կես – XX դարի սկիզբ) և հայկական տպագրությանը նվիրված քարտեզները:

Ատլասի Գ մասն ընդգրկում է 1918 թվականից մինչև մեր օրերի պատմությունը լուսաբանող 66 քարտեզ: Հեղինակը մանրամասնորեն անդրադարձել է Հայաստանի Առաջին Հանրապետության երկամյա պատմության հիմնահարցերին: Համապարփակ լուսաբանված է նաև ՀԽՍՀ պատմությունը, որին նվիրված քարտեզները կազմելիս նա օգտագործել է մեծ թվով անտիպ և արխիվային փաստաթղթեր: Այս տեսանկյունից ուշագրավ են հատկապես 1920-1930-ական թվականներին ՀԽՍՀ տարածքային կորուստներն արտացոլող մի շարք քարտեզներ, ինչը մեր օրերում խիստ արդիական է՝ Ադրբեջանի Հանրապետության անհիմն նկրտումները պարզաբանելու և դրանց հակահարված տալու տեսանկյունից: Իրենց ուրույն տեղն ունեն նաև ՀԽՍՀ տնտեսական և մշակութային ձեռքբերումները, Երկրորդ աշխարհամարտին և Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի ունեցած մասնակցությունը լուսաբանող քարտեզները: Բնականաբար, Գ մասը ներառում է նաև 1988 թ. Արցախյան շարժումը, որի շնորհիվ վերականգնվեց հայոց պետականությունը՝ ի դեմս հայկական երկու հանրապետությունների: Առան-

ձին քարտեզներով ներկայացված են Արցախյան ազատագրական պատերազմը և հայ զենքի հաղթանակը: Քարտեզագրական եղանակով ցույց են տրվել ՀՀ և ԼՂՀ խորհրդարանական ու նախագահական ընտրությունները:

Բ. Հարությունյանի ուշադրությունից չեն վրիպել նաև Սփյուռքին և եկեղեցուն նվիրված մի շարք հիմնահարցեր:

Հարկ է նշել, որ նման հսկայածավալ աշխատանքը Բ. Հարությունյանն իրականացրել է առանձին մասնագետների համագործակցությամբ և աջակցությամբ: Ուստի նա չի զլացել ատլասի Բ և Գ մասերում բարեխղճորեն նշել նրանց անունները (Համլետ Մարգարյան, Յուրա Հովսեփյան, Էդիկ Մինասյան, Գեղամ Բադալյան և այլք): Վերջապես, հատուկ դրվատանքի է արժանի ԵՊՀ Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիայի բազմամյա աշխատակից (ներկայիս վարիչ) Վարդան Մխիթարյանը, որը՝ իբրև արհեստավարժ քարտեզագիր, բարձր մակարդակով իրականացրել է քարտեզների կազմողական և ձևավորման աշխատանքները: Շնորհիվ նրա ջանքերի՝ ընթերցող հանրության սեփականությունն են դարձել ատլասի երեք մասերում գետեղված համապատասխան լուսանկարներ, որոշակի ժամանակաշրջաններին վերաբերող հետաքրքիր և գրավիչ պատմական, այդ թվում՝ հնատիպ քարտեզներ:

Ատլասից դուրս են մնացել հայոց պատմության որոշ դրվագներ, իսկ առանձին քարտեզներ ունեն ընդհանրացնող բնույթ: Դա բացատրվում է նրանով, որ սույն հրատարակությունը հասցեագրված է նախ և առաջ հանրակրթական դպրոցի աշակերտությանը և բուհերի ուսանողությանը, հետևաբար՝ այն պետք է համապատասխաներ հայոց պատմության ուսումնական ծրագրերին: Բացի դրանից, հարկ է հաշվի առնել, որ հեղինակի առջև ծառայել են ատլասի որոշակի ծավալը չխախտելու, տպագրության հետ կապված որոշ դժվարությունները հաղթահարելու բարդություններ: Չպետք է սակայն մոռանալ, որ այդպիսի քարտեզների մի մասը տեղ է գտել 2008 թ. հրատարակված «Հայաստանի ազգային ատլաս»-ի երկրորդ արժեքավոր հատորում, որի գիտական խորհրդի նախագահն ու պատասխանատու խմբագիրը ևս Բ. Հարությունյանն է:

Անուրանալի են «Հայաստանի պատմական ատլաս»-ի՝ որպես գիտական մեծարժեք կոթողի նշանակությունն ու կարևորությունը: Կասկածից վեր է, որ այն իր արժանի տեղը կգրավի հայ պատմագիտական և աշխարհագրական մտքի խոշոր նվաճումների շարքում: Նշենք նաև, որ «Հայաստանի ազգային ատլաս»-ը հանգուցյալ Բաբկեն Հարությունյանի հիշատակը հավերժացնող ինքնատիպ հուշարձան է, նրա հայրենանվեր գործունեության փայլուն առհավատյան:

*ԳԵՂԱՄ ԲԱԴԱԼՅԱՆ*